

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՆ

31.01.2024 11:48



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ**

Հարգելի՛ փաստաբաններ,

Քաղաքացիական դատավարության էլեկտրոնային համակարգի գործարկմամբ պայմանավորված, փաստաբանների կողմից դատավարական փաստաթղթերը պետք է ստորագրվեն էլեկտրոնային եղանակով, որի համար անհրաժեշտ է ունենալ նույնականացման քարտ, որը տրամադրվում է միայն ՀՀ քաղաքացիներին:

Վերոգրայլը նկատի ունենալով պետական մարմինների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ քաղաքացիություն չունեցող փաստաբաններին աջակցել էլեկտրոնային ստորագրություն ձեռք բերելու հարցում:

Խնդրում ենք ՀՀ քաղաքացիություն չունեցող փաստաբաններին էլեկտրոնային ստորագրություն ստանալու անհրաժեշտության մասին հայտնել ՀՀ փաստաբանների պալատ՝ պատասխան նամակ ուղարկելով info@advocates.am էլեկտրոնային հասցեին՝ նշելով Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը:

Վերադառնալ `$(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })`